

# ՀԱՅՈՒԹՅՈՒՆ






Պահօնական ԱՄՍԱԳԻՐ  
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՒՈՅ

Ս. ԷԶՄԻՒԾԾԻՒ

XII



## ԲՈՎԱՆԴԱ ՈՒԹԵՈՒՆ

Հոկտեմբերյան Մեծ ուսուցիչայի առիվ Ամենայն Հայոց Սայրագույն Պատրիարք և Կարողիկոս Նորին Ս. Օծուրյուն Տ. Տ. Վազգեն Ա. ողջույնի հեռագրեր	3
Մեծի Տաճա Կիլիկիո Կարողիկոսական տեղապահի ընտրուրյան առիվ փոխանակված հեռագրեր	6
Նորին Վեհափառուրյան հեռագիրը Մամրէ արքեպիսկոպոս Գալֆա- յանին	7
Վեհափառ Հայրապետի հեռագիրը Զգոն ծ. Վրդ. Տեր Հակոբյանին .	7
Ամենայն Հայոց Սայրագույն Պատրիարք և Կարողիկոս Նորին Ս. Օծու- րյուն Տ. Տ. Վազգեն Ա. շնորհավորական բուլը մեծանուն քա- հաստի Ավետիք Խանակյանի 80-ամյա հորելյանի առիվ	8
Ամենայն Հայոց Սայրագույն Պատրիարք և Կարողիկոս Նորին Ս. Օծու- րյուն Տ. Տ. Վազգեն Ա. ընտրուրյան և զահակալուրյան առիվ եկեղեցական խորհուրդներից, հայ եկեղեցականներից, ազգային մշակուրային կազմակերպուրյաններից, թերքերի խմբագրու- րյուններից և անհատ հավատացյալներից ստացված շնորհավո- րական հեռագրերն ու գրուրյունները	9
Ամենայն Հայոց Սայրագույն Պատրիարք և Կարողիկոս Նորին Ս. Օծու- րյուն Տ. Տ. Վազգեն Ա. պատասխանները իր ընտրուրյան և զա- հակալուրյան առիվ ստացված շնորհավորական հեռագրերին և գրուրյուններին	16
ԽՄԲԱԴՐԱԿԱՆ.— Սովետական Հայաստանի 35 տարին	18
ՊԱՐԴԵՎ. Ա.Բ.ՂԱ. ԳԵՎՈՐԳՅԱՆ.— Ս. Ստեփանոսի Խանատակուրյունը	20
ՄԱՅՐ Ա. Թ. Ռ Ռ Ո Ռ Ո Ւ Մ	22
ՃԵՄԱՐԱԿԱՆԱՍԵՐ.— Ս. Էջմիածնի Հոգեոր Ճեմարանի 1955—1956 ու- սումնական տարեշրջանի բացումը	26
Հոգեշնորի Մաշտոց արեդա Թաշիրյան	28
ՀԱՆԴԻՍԱԿԱՆ.—Ուր նոր սարկավագներ	29
Հ. ՎՐԴ. ՄՈՒՇՅԱՆ.— Էջմիածնի	32
ԱՂԱՎՆԻ ՄԵԽՐՈՊՅԱՆ.— Հուշեր Կոմիտասի մասին	33
Հ. ԵԳԻԱՋԱՐՅԱՆ.— Կեշառիսի վաճքը և նրա վիմագիր արձանագրու- րյունները	38
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ.— Ավետիք Խանակյան	49
Մ. ԷՍԿԻՃՅԱՆ.— Հայաստանին:—Ավետիք Խանակյանին	53
Սայրիդոն Մելիքյան	54
Ստեփան Օհանջանի Կամսարական	56
Հակոբ Սահակի Արամյան	57
Դիտական և գեղարվեստական նոր հաստարակուրյուններ	58
Յանկ «Էջմիածն» ամսագրում 1955 թվականի գրքագրում տպացրված նյութերի	59

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՏԵՎԱԿԱՆ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՉՄԻԱՅՐԻՆ

#### •ՀԶՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин“

**Redaction of the magazine „Etchmiadzin”, Etchmiadzin, Armenia, USSR**

Հ ՐԱՄԱՆՈՒ  
Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա.  
ԳԵՂԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՁՆԱԴՈՅՆ  
ԽԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ



## ՊԱՇՈՆԱԿԱՆ

ՀՈԿԵՄՄՔՔԱՆ ՄԵՒ ՈԵՎՈԼՅՈՒՅԻԱՅԻ  
38-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՈԹԻՎ ԱՄԵՆԱՅԻ ՀԱՅՈՑ  
ԴԱՅՐԱԳՈՒՅԻ ՊԱՏԻՈՐՔ ԵՎ ԿԱՐՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ  
Ս. ՕԾՈՒՔՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա. ՀԵՌԱԳՐԵՐԸ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ  
ՆԱԽԱԳԱՀ ՆԻԿՈԼԱՅ ԲՈՒԼԳԱՆԻՆԻՆ


ՄՈՍԿՎԱ, ԿՐԵՄԼ

ՀԱՅՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԱՅ ԵԿԵՂԵՑԿՈ ԵՎ ՀԱՅ ՀԱԿԱՏԱՅՅԱ  
ԺՈՂՈՎՐԴԻ ԶԵՐՈ ՈՒՐԱԽՈՒԹՅԱՄ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԻՆ ԵՆՔ ԶԵԶ ԵՎ  
ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՌԱԿՈՒԹՅԱՆԸ ՄԵՐ ՍՈՏԱԳԻՆ ՇՆՈՐՀԱԿՈՈՒ-  
ԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՈԿԵՄՄՔՔԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ 38-ՐԴ ՏԱ-  
ՐԵԴԱՐՁԻ ԱՈԹԻՎ, ԱՂՈԹՈՒՄ ԵՆՔ ԱՌ ԱՍՎԱԾ ԵՎ ՄԱՂԹՈՒՄ ՍՈ-  
ՎԵՏԱԿԱՆ ՄԵԾ ՀԱՅՈՒՆԻԹԻՆ ՇԽԱՐՈՐ ԱՌԱՋՈՆԹԱՑ, ԲԱՐՈՈՒ-  
ԹՅՈՒՆ ԵՎ ԻԿԱՂԱՌՈՒԹՅՈՒՆ ՈՈՒՄ ԵՎ ՄԱՅԻՆ ԵՂԲԱՅՈՎԱԿԱՆ ԺՈ-  
ՂՈՎՈՒՐՈՒՆԵՐԻ ՀԱԿԻՏԵՆԱԿԱՆ ԲԱԼԵԿԱՍՈՒԹՅԱՆ ԴՐՈՅԻ ՆԵՐԸ:

ՎԱԶԳԵՆ Ա.

ԿԱՐՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅԻ ՀԱՅՈՑ





ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈՒ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ  
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ  
ՇՄԱՎՈՆ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հոկտեմբերյան Մեծ հեղափոխության 38-րդ տարեդարձի առիվ Հայաստանյաց Եկեղեցվո անունից հանեցեք ընդունել Մեր ամենաշերմ շնորհավորանեները: Ազգություն ենք և ի սրտե մաղրում մեր Մայր Հայրենիքին խաղաղ առաջընթաց և բարօրություն՝ Սովետական մեծ Միության եղբայրական ժողովուրդների ընտանիքում:

Վ. Ա. Զ Գ Ե Ն Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈՒ ՄԻՆԻՍՏՐԱՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ  
ԱՆՏՈՆ ՔՈԶԻՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հոկտեմբերյան Մեծ հեղափոխության 38-րդ տարեդարձի առիվ ուրախությունն ունենք Ձեզ ներկայացնելու Մեր սրտազին շնորհավորությունները Հայաստանյաց Եկեղեցվո անունից: Ազգություն ենք առ Աստված և մաղրում նորանոր հաջողություններ մեր հայրենի կառավարությանը շինարարության, ժողովրդի բարօրության և խաղաղության ամրապնդման գործում:

Վ. Ա. Զ Գ Ե Ն Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ





ՍՍՈՒ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ԿՐՈՆԱԿԱՆ  
ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ  
ՊՈԼՅԱՆՍԿՈՒՆ

ՄՈՍԿՎԱ.

Մայր Արքու Ա. կղմիածնի և Հայաստանյաց Եկեղեցվո անունից հանեցեց ընդունել Մեր սրտազին շնորհավորանեներն ու լավագույն բարեմաղրությունները Զեր առողջության և աշխատանքի հաջողության համար՝ Հոկտեմբերյան Մեծ հեղափոխության 38-րդ տարեդարձի առիվ:

Վ. Ա. Զ. Գ. Ե. Ն. Ա.  
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈՒ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ  
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ  
ՀՐԱԶՅԱ ԳՐԻ ԳՈՐՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Մայր Արքու Սուրբ կղմիածնի և Հայաստանյաց Եկեղեցվո անունից ընդունեցեմ Մեր շերմ շնորհավորություններն ու լավագույն բարեմաղրությունները Զեր առողջության և հայրենանվեր գործոց հաջողության համար՝ Հոկտեմբերյան Մեծ հեղափոխության 38-րդ տարեդարձի առիվ:

Վ. Ա. Զ. Գ. Ե. Ն. Ա.  
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ





ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀԻ  
ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ

ԹԵՑՐՈՒԹԻՑ

ՆՈՐԻՆ Ս. ՕՇՈԽԹՅՈՒՆ Վ. Ա. Զ. Գ. Ե. Ն. Ս.  
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Խաղ արքեպիսկոպոսի հրաժարման պատճառով միաբանական ժողովը  
Խորեն Եպիսկոպոս Բարոյանին ընտրեց Տեղապահ:

Միաբանական ժողովի նախագահ՝  
ԶԱՐԵՀ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ  
ԽՈՐԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱՐՈՅԱՆԻՆ

ԱՆԹԻԼԻՍՈ

Էնդունեցեք Մեր ամենազերմ մաղրանքները Ձեր գործի հաջողության հա-  
մար, ստեղծելու լավագույն պայմաններ, որպեսզի Մեծի Տանն Կիլիկիո Արք-  
ու արժանավոր Գահակալ ունենա մեր Սուրբ Եկեղեցվոր միուրյան և սիրո  
պահպանման նվիրական ոգիով:

Ողջունիվ և օրինությամբ՝

Վ. Ա. Զ. Գ. Ե. Ն. Ս.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ





1955 Թվի ԳԵԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ՆՅՈՒ-ՅՈՐՔՈՒՄ ԳՈՒՄԱՐՎԵԼ ՀՀՅՈՒՄՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ  
ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ: ՆՈՐԻՆ Ս. ՕՇՈՒԹՅՈՒՆ  
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀԴԵԼ. Է ԻՐ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՂՋՈՒՅՆԸ ԹԵՄԻ  
ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ:

## ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅԸՆ ՀԵԹՍԴԻՐԸ ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՖԱՅԱՆԻՆ

ՆՅՈՒ-ՅՈՐՔ

Տիրախնամ թեմիդ պատգամավորական ժողովի գումարման առիվ ընդունեցել Մեր սիրո ջերմագին ողջունը և օրհնությունը հայրապետական Մայր Արքու Ս. Էջմիածնեն ողջայլ Զերդ Գերապատվության, մեր սիրեցյալ հոգևորական դասուն, պատգամավորական ժողովո բոլոր հարգարժան անդամներուն և համայն մեր հավատացյալ ու հայրենաբաղ ժողովուրդին, մաղթելով բոլորիդ ի Տյառնե բազառողջ կյանք, ուժ և կարողություն և եկեղեցակերպություն ի Քրիստոս սիրով և ազգային միասնությամբ:

Շնորհի և խաղաղություն Տյառն մերո Հիսուսի Քրիստոսի ընդ Զեզ:

Վ. Զ. Գ. Ե. Ն. Ա.  
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՆՈՐԻՆ Ս. ՕՇՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՐԱՄԱՆՈՎ Տ. ԶԳՈՆ ԾԱՅՐԱՎՈՒԵՆ  
ՎԱՐԴԱՊԵՏԸ ՆՇԱՆԱԿՎԵԼ Է ԲԱՂԴԱԴԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ:

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵԹՍԴԻՐԸ ԶԳՈՆ Ծ. ՎՐԴ. ՏԵՐ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

ՄԻԱՆ

Մտահոգված ըլլալով թափուր թեմերու հարցով (և հիմնված Զեր համաձայնության վրա) կառաջարկենք Զեզ Մենդյան տոներեն առաջ մեկնիլ թաղդադ որպես Կարողիկոսական պատվիրակ մեր կողմէ լիազորված և կազմակերպել իրաֆի թեմը: Կուղարկվի լիազորագիր նամակը:

Վ. Զ. Գ. Ե. Ն. Ա.  
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



**ՍՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՃԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐք ԵՎ  
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕԺՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա.  
ՃՆՈՐՃՎՈՐՅԿԱՆ ԹՈՒՂԹԸ ՄԵԺԱՆՈՒՆ ԲԱՆԱՍՏԵՂԺ  
ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ  
80-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻ ՍԹԹԻՎ**

Ուսախացուցիր ժողովուրդը մեր՝ ուժունամյա Քու հոբելյանիդ ոսկի պարգևով:

Հոգեցիր, ոգեռեցիր ու ներշնչեցիր բոլոր հայերը: Եվ մեր սրտերուն ամեն լաւերեն աղորք բարձրացավ հայոց Աստուծուն Քու կյանքիդ համար, Քու փառքիդ համար:

Քու մեծ սրտիդ մեջ, Քու լույս խոսքիդ մեջ ժողովուրդը մեր իր հոգին զուակ՝ բյուրեղացումը իր վառ հույզերուն, իրավ խոներուն, արդար տենչերուն:

Պատմութունն ամբողջ Քու կյանքիդ՝ պատմույրյունն եղավ Քու ազգից ազգիդ՝ այրող վիշտերով, որոնումներով, հաղբանակներով:


Արշալույսին վառ Քու կյանքիդ սեմին գիշեր էր իշեր հայոց երկինքին. բայց մայրամուտին Քու բնծա կյանքիդ արշալույս ծարեց Հայոց աշխարհին:

Այդ լուսաբացին Դուք արև եկար և Քու լույս հոգով հայոց արևին լույսն անեցուցիր Քու կյանքի երգով, Քու հույսի երգով, Քու սիրո երգով:

Սիրելի՝ Վարպետ, բանկազի՛ն Վարպետ, հարազա՛ն Վարպետ: Քեզ արև օրեր և լույս հավիտյան Տիրոջն օրհնուրյամբ և սուրբ հավատի անման զուրոյամբ:

**ՎԱԶԳԵՆ Ա.**

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԵԱԶՐԱԳՈՒՅԵՎ ՊԱՏՐԻԱՐք  
ԵՎ ԿԱՐՈՂԻԿՈՍ ՆՈՐԻ Ս. ՕՆՈՒԹՅՈՒՆ  
Տ. Տ. Վ. Ա. Գ. Գ. Ե. Ա. ԲԵՏՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ  
ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԱՌԻՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ  
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻՑ, ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐԻՑ,  
ԱԶԳԱՅԻՆ ՄԵԴԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԻ  
ՆԵՐԻՑ, ԹԵՐԹԵՐԻ ԽՄԲԱԳԻՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ  
ԵՎ ԱՆՀԱՅ ՀԱՎԱՏԱՅՅԱԼՆԵՐԻՑ ԱՏԱՅՎԱՆ  
ԵՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՇԱԳՐԵՐԻ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ԲՈՒԽԱՐԵՍՏԻՑ**

Վ ե հ ա փ ա ռ Տ ե ր :

Անկուն բերկրուրյամբ և ոգկորուրյամբ ստացանք Ձեր Ամենայն Հայոց Կարողիկոս ընտրվելու ուրախալի լուրը: Շնորհավորում ենք Ձեր Ս. Լուսակորչ՝ յ Արողին բազմելու մեծահանդիս օրը և բարեմաղրում ենք Ձեզ երկար օրեր, ենու ուժ և կորով՝ Ձեզ հատուկ հվիրվածուրյամբ առաջ տանելու կամոնն Աստուծո Ձեզ վիճակված հայ ժողովրդին նովվելու սրբազն պատահանուրյունը: Ցավում ենք, որ Դուք, ուղախ մեր նկեղեցու արձանավորագոյն ներկայացուցիչը, հեռանաւ եք Ռումինահայ թեմից, բայց խոնաշիվելով մեր ժողովրդի բարձր կամքի առաջ, միսիրարում ենք մեզ, որ Վեհուրյանդ օրհնուրյունը միշտ մեզ հովանի կլինի և կիամախիմի Սփյուռքի հայուրյունը Մայր Արողի և մեր սիրելի Հայրենիքի շուրջ:

**ԲՈՒԽԱՐԵՍՏԻՑ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**ՖՈԿՇԱՆԻՑ**

Որդիական շնորհավորուրյուններ:

Բեղուն նովվապետուրյան մադրանեներով՝  
ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ ՔԱՀԱՆԱ,  
ԹԱՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻ  
ԵՎ ՀԱՄԱՅՆՔ ՖՈԿՇԱՆԻ

**ԿՈԼԱՐՈՎԳՐԱԴԻՑ**

Կոլարովգրադի հավատացյալ հայերի անունից խնդրում ենք Ձեզ ընդունելու մեր սրապին բարեկամեցողուրյունը Ձեր հաջող ընտրուրյան առիվ, ինչպես և հաղորդել Ձեզ մեր խոնարհ որդիական ցանկուրյունը՝ բաշառողչուրյան և երկար տարիների համար:

**ԿՈԼԱՐՈՎԳՐԱԴԻՑ (ՔՈՒՂԱՐԻԱ) ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

**ՄԻԱՄԻՒՑ (ՖԼՈՐԻԴԱ, ԱՄՆ)**

Որդիական ակնածանելով շնորհավորում եմ Ձեր ընտրուրյունը և մադրում հաջող և առողջ տարիներ և երկար կյանք:

Խոնարհ հարգանքով՝  
ՎԱՀՐԱՄ ՇԱՅՐԱԳՈՒՅՑ ՎԱՐԴԱՊԵՏ ՆԱԶԱՐԵԹՅՈՒՆ

**ՄՈՍԿՎԱՑԻՑ**

Մրտանց շնորհավորում ենք Ձերդ Մրբարյան Ամենայն Հայոց Մայրաքայն Պատրիարք-Կարպոլիկոս ընտրվելու և օծման առիվ: Յանձնանում ենք լավագույն հաջողություններ Ձեր նետազա բեղմնավոր գործունեության ընթացքում՝ ի բարօրություն սիրելի Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու:

ՊԱՐԳԵՎ Ա.ԲԵՂԱ. ԳԵՎՈՐԳՅԱՆ  
ՀԱՅՐԻԿ Ա.ԲԵՂԱ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

**ԱԹԵՆՔԻՑ**

Հանուն գաղութիս կուզանք աճխառն ուրախությամբ շնորհավորել Ձերդ Ա. Օծության ընտրությունը որպես Հայրապետ Ամենայն Հայոց և խոնահարաց մատուցանել սրտազին բարեմադրանք՝ Ձերդ Վեհափառության բանկազին կենաց և արելատության համար:

ՆԵՐՍԻՆ ՔԱՀԱՆԱ. ԽՈՇՈՐՅԱՆ

**ԻԵՀՈՒԱՆԻՑ**

Մրտարուիս, ամենալավագույն զգացումներով և հոգեպարագ խնդրում շնորհավորում եմ Ձեր սուրբ օծումն և գահակալությունը, մաղրելով ամենահարող Աստուծուց, որ արելատություն պարզեն Ձեզ և Գերազույն Հոգեու Խորհրդին շնորհի ավելի զործունեություն:

Համբույր մատուցանելով օծյալ Աջույղ՝

ԱԱՀԱՆ ՔԱՀԱՆԱ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

**ԲԱԶԱՐՃԸԳԻՑ**

Անհուն ուրախությամբ կշնորհավորենք Ձերդ ազգբնտիր Վեհափառությունը:

ԽՈՆԱՐԻ ԺՈՆԻ  
ԶԱՔԱՐԻԱ. ՔԱՀԱՆԱ

**ԲՈՒՐԳԱՋԸԳԻՑ**

Որդիական չերմ սիրով կշնորհավորեմ Ձեր Ա. Օծումը:

ԱԹԱՆԱ. ՔԱՀԱՆԱ. Ա. ԽՈՎԱՏՈՒՅՅԱՆ

**ԲԲԱՅԻԼՅԱՆԻՑ**

Ցնծազին կողունեմ Ձեր բարձրացումը Լուսավորչի նվիրական Գանին վրա: Մրինյալ ըլլա Տիրոջը ողորմությունը:

ՀՈՎՀԱՆՆԵՆ ՔԱՀԱՆԱ. ԴԱՐԻԲՅԱՆ

**ՍՈՒԶԱՎԱՅԻՑ**

Ձեր Բարձր Մրբագենության Պատրիարք-Կարպոլիկոս ընտրվելու բարեպատեհ առիվ ընդունեցի հավատացյալներու և իմ ուղիական սրտազին շնորհավորությունները: Կմաղրենք Ձեզ առողջություն և եւկար կյանք՝ ի բարօրություն Հայոց Առաքելական Եկեղեցվոր և Հայրենյաց:

Գնել ՔԱՀԱՆԱ. ՄԱՆԴԱԼՅԱՆ

**ԲՈՒԽԱՐԵՍԻՑ**

Վ Ե Բ Ա Փ Ա Ն Տ Ե ՞ Ր :

Մատշելով ի համբույր Ա. Աջույղ կմաղրեմ եւկար կյանք, առողջություն և հաջողություն՝ ի փառ Հայաստանյաց Ա. Եկեղեցվոր:

ԱՏԵՓԱՆ ՍՈՒՐԿԱՎՈՐ

**ՊԼՈՎԴԻՎԸ**

**Զերմագին շնորհավորություններ:**

Լավագույն մաղրանքներս՝  
ԿՈՐԱՊԵՏ ՍԱՐԿԱՎԱԳ ՓԱՓԱԶՅԱՆ

**ԹԵՅՐՈՒԹԻՒՑ**

Մեծ հաճույքով լսեցինք Պալեյան Կարողիկոսի բնարությունը: Մաղրում  
ենք բարգավանության երկար տարիներ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ  
ԼԻՔԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**ԹԵՅՐՈՒԹԻՒՑ**

Հրեվանքով կողջունենք Զեր զահակալությունը: Երկնավորեն կխնդրենք  
առեջատություն և կորով, կմաղրենք, որ Զեր Հովհանքական շրջանին ավել-  
ի բարգավանի Հայատանյաց Եկեղեցին, պահի և զորացի եկեղեցվո-  
միասնականությունը:

**«ԳԱՐԹ-ՈՒԹ» ՕՐԱԹԵՐԹ**

**ՓԱՐԻԶԻՑ**

Ֆրանսիայի հայկական ծագումով Երիտասարդությունը ողջունում և շեր-  
մագին շնորհավորում է Ամենայն Հայոց Կարողիկոս նորին Ս. Օծուրյան  
Վազգին Ա. ին:

ՅԲԱՆՍԱՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԻՒՆ

**ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍԻՑ**

Ի սրբ կշնորհավորենք Զերդ Վեհափառության ընտրությունը ուշիս  
Ամենայն Հայոց Կարողիկոս: Վատահ ենք, որպես հաշորդք մեծ Հայրապետ-  
ներու, պիտի շարունակեն անոնց ազգաշեն գործը հանուն Հայ Ազգի և Հա-  
յատանյաց Առաքելական Եկեղեցիի միասնականության և պայծառության.  
Էջմիածնի ենդիմակության, տեականացման, սովետական եղբայրական ժո-  
ղովուրդներու բարօրության և աշխատի խաղաղության:

**ՅԱԳԵՆԵՍԻՑԱՅԻ ՄԾԱԿՈՒՐԱՅԻՆ ՄԻԱՐՅԱՑ**

**ԿԵՊՐՈՆԵԱԿԱՑ ՎԱՐՀԱՐԵՎԱՑ**

**ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԳՐԻԳՈՐ ԿՅՈՒՆՃԱՆ**

**ՆԱԽԱԳԱԿԻ ԹՈՒՆԻԿ ՇԻՐԱԿՅԱՆ**

**ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍԻՑ**

ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍԻ Հայատանյաց Եկեղեցվո Երիտասարդաց կազմակեր-  
պությունը կշնորհավորե ազգընափառ Հայրապետին օծումը, համբուրելով իր  
Ս. Ազր կհայցե իր հայրական օրինությունը:

ԲՈՒԵՆՈՍ-ԱՅՐԵՍԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅ ԵԿԵՂԵՑՎՈ  
ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ԿԱՅՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

**ԲՈՒԻՆՈՐԵՍԻՑ**

Էնդունեցիք մեր շնորհավորությունները Զեր ընտրության առքիվ:

ԲՈՒՔԲԵՇԻ ԵԿԵՂԵՑՎՈ ԵՐԳՉԱԽՈՒՄԲ,

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԲՈՒԻՆՈՐԵՍԻՑ**

Բայրեշի Ստեփան Շահումյան Հայ մշակույրի տան վարչությունը շերմո-  
րեն կշնորհավորե Զեր ընտրությունը իրեւ Կարողիկոս Ամենայն Հայոց և  
կմարդք Զեզ առողջություն, կորով և հաշորդություն:

**Ստեփան Շահումյան Հայ մծակույրի տան անօրեն՝**

**ԿՈՐԱՊԵՏ ԱԴԱՄՅԱՆ**

## ԲՈՒԽԱՐԵՍԻՑ

«Նոր կյանք»ի և «Սևան»ի խմբագրությունը ջերմութեն կշնորհաւորե Զեր բնարությունը իրեւ Կարողիկոս Ամենայն Հայոց:

«ՆՈՐ ԿՅԱՆՔ» ԵՎ «ՍԵՎԱՆ»  
ԹԵՐԹԵՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ԲՈՒԽԱՐԵՍԻՑ

Վեհությանդ ընտրությունը որպես Ամենայն Հայոց Կարողիկոս ուրախությամբ լեցուց մեր սիրաբը: Մեր վարժարանի ուսուցչական կազմեն և իմ անոննեն կշնորհավորենք Զեզ և կմաղբենք Զեզ բեղմնավոր գործունեություն՝ հօգուտ ամբողջ հայության և մեր սիրելի Հայրենիքի:

ԲՈՒԽԱՐԵՍԻՑ ազգային վարժարանի տեսօնին  
Ն. ԳՐԻԳՈՐՅԱՆ

## ՍՈՑԻԱՑԻՑ

Զերմունեն ընորհավորում ենք Զեր բնարությունը որպես Հայրավետը Հայ նկեղեցվու և սրբաց մարդում ենք կորուլով և հայրենասիրական ոգով շարունակել խաղաղության և համայն մարդկության բարօրության նվիրական գործը:

«ԵՐԵՎԱՆ» ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

## ԱՍՏՐԱԽԱՆԻՑ

Զ Ե Ր Դ Ս Ե Ր Ո Ւ Ր Յ Ո Ւ Ր Ե :

Թույլ ավել Աստրախան բաղադրի բավատացյալ հայերի անունից արտահայտել մեր անսահման ուրախությունը, որ ի վերջո Ս. էջմիածինի Կարողիկոսական Գանից վերացվեց սուզր և հայ ժողովրդի զավակների միահամուռ կամքով Դուք բարձրացաք Ս. Գրիգոր Լուսավորչի Գանիք: Մեր հոգում բուռն ուրախության մեծագույն տոնակատարություն է, որովհետև հանձին Զեզ մենք տեսնում ենք Ամենայն Հայոց արժանքնայիր Մայրագույն Պատրիարք-Կարողիկոսին:

Աշխարհի ամեն մի անկյունում յուրաքանչյուր հայ մարդ առանց հոգմունքի և սրտի տրոփյունից չի կարող արտասանել և լսել «էջմիածին» բառը:

Հեադարյան վաճիքի կամարեների տակ շատերը կլսեն Զեր հովվական միսիրարության խոսքը և նորից կնքորանա հավատը երբեմնի բազմաշարշար հայ ժողովրդի լուսավոր զալիքի հանդեպ:

Հոգով ցանկանում ենք Զեզ երկար տարիների բազուղչություն՝ հուրանություն և ի մինիքարություն Զեր զավակների:

Հավատացյալ հայերի խնդրաներով  
Մ. ՆԱԶԱՐՅԱՆ

## ԱՍՏՐԱԽԱՆԻՑ

Զ Ե Ր Դ Վ Ե Կ Ա Փ Ա ռ Ո Ւ Ր Յ Ո Ւ Ր Ե :

Մի խումբ հայ ուսանողներ Աստրախան բաղադրից շտապում ենք հղել Զերդ Ս. Օծուրյան մեր պատանի հոգուց բխած սրտագին շնորհավորանեները՝ Զեր Ս. Գրիգորի Մայր Առողին բազմելու առքիվ: Անսահման է մեր ուրախությունը այն բանի համար, որ Դուք, հայ ժողովրդի կամքով, հանդիսացաք արժանավոր ընտրյալը Կարողիկոսական Ս. Գանիք վրա:

Վ Ե Կ Ա Փ Ա ռ տ ե՛ր:

Մեր բուռն ցանկությունն այն է, որ Զեր օրոք Հայ ժողովրդական եկեղեցին է՛լ ավելի բարգավաճի և է՛լ ավելի ամրապնդվի մեր հնագույն Առաքելա-

կան նկեղեցու սուրբ հիմքը: Մենք նաև ցանկանում ենք, որ Դուք ողջ միաբանության աշակցությամբ կարողանաբ իրազործել մեր երանկանիշտառակ Հայրապետ Գևորգ Զ.ի շինարար ծրագիրը: Մաղրում ենք Ամենայն Հայոց ազգին՝ տիր Տ. Տ. Վազգեն Ա. Կարողիկոսին Երկար, Երկար կյանք և բեղմնավոր գործունեություն՝ հուրախություն և ի միմիրառություն նայ ժողովրդի և մեր Յ. Նկեղեցու:

Սուեր չոքած համբուրում ենք Ձեր Ս. Ազը:

Ձերդ Ս. Օծուրյան խոհարի ծառաներ՝  
Ս.Ս.Մ.Խ.Ա.Ն.Ի ՄԻ ԽՈՒՄԲ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

### ՆՅՈՒ-ՅՈՒԹԻՅ

Ձերդ Վեհափառության զահակալության բարերաստիկ առիրով անհուն ուրախությամբ կհայտնենք մեր շնորհավորություններն ու բարեմաղրանքները և կհայցենք ի Տառնե պարզելու Ձերդ Ս. Օծուրյան Երկար կյանք և արդյունավետ գործունեություն՝ Հայաստանյաց Եկեղեցվա փառքին համար:

Տեր Եպ. Տիկին ՀԱՅԿ ԳԱՎՈՒԹՅԱՆ

### ՆՅՈՒ-ՅՈՒԹԻՅ

Ձեր զահակալության առիրիկ սրտագին շնորհավորություններս: Կմալ-թեմ մեր հայրերու Աստուծմին, որ կարողություն տա Ձերդ Վեհափառության շարունակելու Ս. Գրիգոր Լուսավորչի գործը՝ ի պայծառություն մեր Եկեղեցվա և ի փառս Աստուծու:

ՏԱ.ՏՈՒՐ ՏԱ.ՏՈՒՐՅԱՆ

### ՅՐԵԶՆՈՅԻՑԻՅ

Մրտագին շնորհավորություններ: Ցանկանում ենք Ձեզ երջանիկ և Երկար կյանք:

Ա.ՌԱ.ՔԵԼ. Ք. ՅԱ.Գ.ՃՅԱՆ

### ԲԵՅՐՈՒԹԻՅ

Հայտնում ենք շերմագին շնորհավորություններ Պալեյան Կարողիկոսի լրիկ հաջողած ընտրության համար: Մաղրում ենք, որ Աստված նրան տա Երկար կյանք և ուժ՝ բազմադարյան Դամի բազմավանման համար:

ԵՐՎԱՆԴ ՏԵՄԻՐՃՅԱՆ

### ԲԵՅՐՈՒԹԻՅ

Անման Գրիգոր Լուսավորչի Դամի վրա Ձեր բարձրացման առիրիկ շնորհավորություններ: Օրինեցել մեզ:

ՄԻԱՎՅԱՆ ԸՆՏԱՆԻՔ

### ԲԵՅՐՈՒԹԻՅ

Ներկայացնում ենք շերմագին շնորհավորություններ:

ՀԱՀԻՆ ԿԱՐՃՅԱՆ

### ԲԵՅՐՈՒԹԻՅ

Մրտագին շնորհավորություններս:

ՄԱՐԻ ՊՈԶԱԳԱԼՅԱՆ

### ՓԱ.ՐԻԶԻՅ

Ձերմորեն կշնորհավորենք կարողիկոսական ընտրությունը, մաղրելով աշխարհին խաղաղություն և նորբնտիր Հայրապետին՝ բեղմնավոր գործունեություն:

ՍՈՓՈԿԼՅԱՆ

### ԿՈՍՏԱՆԴՈՒԹՈՒՄԻՑ

Մրաշերմ շնորհավորեմ Զերդ Վեհափառության բնարությունը:  
Համբուրելով Զեր սրբազնասուր Աջը՝

ԹՈՐՈՍ ԱԶԱՏՅԱՆ

### ԲՈՒԽԱՐԵՍՄԻՑ

Ընդունեցեմ իմ անկեղծ շնորհավորությունները Զերդ Մրության բնարության առքիվ իր Ամենայն Հայոց Կարողիկոս: Կիսնդրեմ առ Ամենակալին, որպեսզի Զեզի առաջնորդի Զեր սուրբ առաքելության մեջ՝ շարունակելու մեր եկեղեցվոր ավանդությունը և մեր հախնիքներու անման գործը՝ մատուր հանապարհով ու հայրենասիրական չերմ զգացումներով:

**Թօվկական համալսարանի զասախառ՝  
ԴՈԿՏՈՐ ԳՐԻԳՈՐ ՅԱՄՊՈՒՔՃԱՅԱՆ**

### ԲՈՒԽԱՐԵՍՄԻՑ

Մրագին շնորհավարություններ Զերդ Մրության Ամենայն Հայոց Կարողիկոս բնարովելու առքիվ: Զերմագին մաղրանքներ արևատության ու շինարար պաշտոնավարության համար:

**ԴՈԿՏՈՐ ՄԵՐՈՒՆ ՖՈՒՐՈՒՆՅԱՅԱՆ**

### ԲՈՒԽԱՐԵՍՄԻՑ

Կշնորհավորեմ Զեր բնարությունն իր Կարողիկոս Ամենայն Հայոց: Զերմագին կմաղրեմ առողջություն և երկար կյանք՝ հաջողությամբ տաճելու պատասխանատու աշխատանքը: Հպարտությամբ պիտի հիշեմ մեր գործակցությունը ի հպատ Ռումանիայ թեմին:

**Իրավաբանական օժանդակության տեօրին  
Փաստաբան ՀՐԱՆՏ ՀՈԿՈՅՅԱՆ**

### ԲՈՒԽԱՐԵՍՄԻՑ

Անսահման ուրախություն Զերդ Մրության բնարության առքիվ իր Ամենայն Հայոց Կարողիկոս: Կիսնդրեմ Տիրողմեն, որ պարզեն Զեզ երկար կյանք և արիություն՝ ունենալու արդյունավետ գործունեություն՝ ի պայծառություն մեր նկեղեցվոր և Ազգին:

**ԱՐԴԱԿ ՀԱԼՈՎՅԱՆ**

### ԲՈՒԽԱՐԵՍՄԻՑ

Իրեն Զեր անձենական հարտուղարք, որ տարիներով իր համեստ գործակցությունն ունեցավ մեր թեմին աշխատանքներուն, և որ ավելի անդյակ է այն խանդավառ պաշտամունքին, զոր կաածեմ դեպի Հայ նկեղեցին և այն չերծ սիրույն, զոր ուժիք դեպի հայ ծողովություն ու անոր Հայրենիքը, կուզամ շնորհավորություններս ներկայացնել ու մաղրել, որ երկար ըլլան Զեր տարիները և անսահման՝ Զեր առողջությունը, որպեսզի կարենամ զանոնք ի սպաս դնել ի հպատ Մայր Արքունի վերածաղկման, Հայ նկեղեցվոր միասնականության և հայ ժողովուղի կապերուն ամրապնդման դեպի իր պապերուն հավատքը և դեպի Հայրենի հողը:

**Որդիական սիրով՝  
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԱԼԻՓԱՔՅԱՆ**

**ԲՈՒԽԱՐԵՍԻՑ**

Որդիական ամենաջեմ զգացումներով կրոյլատրեմ ինձ շնորհավորելու Ձերդ Մրգության բնարկիր իր Ամենայն Հայոց Վեհափառ Կարողիկոս: Մրտա-  
վիճ կմադրեմ երկար ու երջանիկ կյանք, ազգօգուտ գործունեություն:

Խոնարհաբար  
ԶԱՏԻԿ ՄՈՒՐԱՏՅԱՆ

**ԲՈՒԽԱՐԵՍԻՑ**

Ընդունեցիք խնդրեմ նվաստիս սրտանց շնորհավորությունները: Կմադրեմ Ձեզ երկար օրեր և կատարյալ նաջողորդյուն, կցանկամ նաև, որ Վեհության Հայրապետությունը մեկ նոր կանաչ մեր պատմության մեջ:

ՔԱՍԱՐՁՅԱՆ

**ԲՈՒԽԱՐԵՍԻՑ**

Մեր շնորհավորությունները Ձեր բարձր հշանակման առքիվ:

ՎԱՐԴԱՆ ԹԱՂԵՌՈՒ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

**ԲՐԱՅԻԼԱՅԻՑ**

Վ Ե Բ Ա Փ Ա Ն Տ Ե Ր:

Ընդունեցիք մեր խոնարի և սրտարուի շնորհավորությունները Ձեր Ամե-  
նայն Հայոց Հովվապետ բնուրգելու երջանիկ առիրով:

ԱՆԴՐԱՆԻԿ ԲԱՂԴԱՍՍՈՐՅԱՆ,  
ՆԱԶԱՐԵԹ ԳԱԶԱԳՅԱՆ

**ԳԼՈՎԴԻՎՈՒՅԻՑ**

Անկեղծ շնորհավորություններ:

Լավագույն մադրանեներով  
ՍԱՐԳԻՍ ՓԱԼԹՈՅԱՆ

**ԲՈՒԽՆՈՍ-ԱՅՐԵՍԻՑ**

Զերմագին շնորհավորություններ, լավագույն մադրանեներ:

ԹԱՐԱԿՅԱՆ,  
ՊԱՀԱՏՐՅԱՆ,  
ԶԱԿԻՐՅԱՆ,  
ՔՅՈՒՐՔՃՅԱՆ,  
ՀՅՈՒՍԽՅԱՆ

**ԲՈՒԽՆՈՍ-ԱՅՐԵՍԻՑ**

Մրտագին շնորհավորություններով կհամբուրեմ Ձեր Ս. Աջը:

ԻՄՐԱՅԵԼՅԱՆ ԳԵՐԳՈՍՅԱՆ

**ԹԹԻԼԻՍԻԻՑ**

Հայության նայության պատգամավորների հավանությամբ Վազգեն Ա. Վե-  
հափառ Կարողիկոսի ընտրությունը մեզ՝ թիֆլաբբակ հայերիս մեծ գոհու-  
նակություն և ուրախություն պատճենեց:

Մադրում ենք երկար կյանք և արյունավետ գործունեություն Ամենայն  
Հայոց նորբնտիր Կարողիկոս Տ. Տ. Վազգեն Ա.ին:

ԾՈՀԱՆ ՄԻՐՈՒ

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԽԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻՈ. Ի. Ք.  
ԵՎ ԿԱԹՈԼԻԿԱՆՈ ՆՈՐԻՆ Ս. ՕՆՈՒԹՅՈՒՆՆ  
Տ. Տ. Վ. Ա. Զ Գ Ե Ն Ա. ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ  
ԻՐ ԵՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱԼԹԻՎ  
ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՊԱԳՐԵՐԻՆ  
ԵՎ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ**

ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻՆ (ԵՊԻԿՈՊՈՍՆԵՐԻՆ,  
ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐԻՆ ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ  
ՔԱՀԱՆԱՆՆԵՐԻՆ)

Զերմ գոհունակուրյամբ ստացանք Զեր շնորհավորական հեռագիրը  
Մեր ընտրության առիվ: Ընդունեցեմ Մեր սիրո ողջույնը և օրինուրյունը  
Զեզ և Զեր հավատացյալ հոտին ուղղյալ: Թող Տեղը անսասան պահե մեր  
Ս. Եկեղեցին:

Վ. Ա. Զ Գ Ե Ն Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

**ԹԵՄԱԿԱՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՈՐՀՈՒԴՆԵՐԻՆ**

Հայրական ջերմ զգացումներով տողորված կարդացինք Զեր շնորհավորական խոսքը Մեր ընտրության առիվ: Կմաղքենք Զեզ բոլորիդ առաջուրյուն, ուժ և եռանդ վասն պայծառության Ս. Եկեղեցվո և ի բարօրուրյուն համայնք հավատացյալ հայ ժողովուրդին:

Սիրո ողջունիվ և հայրապետական օրինուրյամբ՝

Վ. Ա. Զ Գ Ե Ն Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

**ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ,  
ԹԵՐԹԵՐԻՆ, ԱԿՈՒՄԲՆԵՐԻՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ**

Մեր ընտրության առիվ Զեր շնորհավորական խոսքը ընդունեցինք ամենաշերմ գոհունակուրյամբ: Միխրաբված ենք և ուրախ, որ Սփյուռքի հայուրյունը վառ զգացումներով կապված կմնա Մայր Արորին և Հարազատ Մայր Հայրենիքին:

Ընդունեցեմ Միաձնաէլ Մայր Տաճարեն Մեր սիրո ողջույնը և հայրապետական օրինուրյունը:

Վ. Ա. Զ Գ Ե Ն Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

## ԱՐՍԵՆ ՔԱՀԱՆԱ ՍԻՄԵՈՆՅԱՆՑԻՆ

ԲՈՒՏՈՒ

Զերմ զգացումներով տոգորված և միսիրարված կարդացինք Ձեր շնորհավորական խոսքը Մեր ընտրության առիվ։ Մեր իղձն է մեր հավատացյալ ժողովրդի բոլոր զավակները տեսնել մեր Սուրբ Եկեղեցին սիրո եղբայրության մեջ հավաքված իրեւ մի հոտ և մի հովիվ, Միաձնաէց Մայր Արքոնի լույսին տակ։

Սիրո ողջույն և հայրապետական օրինություն Ձեզ և հավատացյալ ժողովուդին։

Վ. Ա. Զ Գ Ե Ն Ա.


ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

### ԱՆՀԱՏՆԵՐԻՆ (ՀԱՎԱՔԱԿԱՆ ՀԵՇԱԳԻՐ ՏԵՂԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ)

Նորբերտիր Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ ստացած է բազմարիվ ազգայինների շնորհավորությունները։ Խնդրում ենք հաղորդել բոլորին Վեհափառ Հայրապետի հայրական սիրո ողջույնը և օրինությունը։

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈ





## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 35 ՏԱՐԻՆ

«Տեղիս վյանիկ, կրակից կելնես, կելնես մոր,

Խղեցկորյամբ ու փառքով վառ ու լուսավոր»:

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ

  
այ ժողովրդի պատմության մեջ  
անմոռանալի տարերիվ է 1920  
թվականի նոյեմբերի 29-ը, ոս-  
կեղեն տառերով գրված ամեն մի  
հայի սրբում:

Այստեղ է վերշանում հայի մոայի ու ա-  
րյունու անցյալը և սկսում լուսաշող ներ-  
կան, մահվան եղրին հասած, անօքնական,  
դարերով տրուված հայ ժողովուրդը ոսիի  
կանգնեց ուս մեծ և ազնիվ ժողովրդի  
եղրայրական օգնությամբ, ընդմիշտ բորա-  
փեկու դարերի սորոկության փոշին, փշրելու  
դարավոր ազատագրության շղթան և  
նվաճելու իրեն համար ազատ իրավունք,  
պետականություն և Հայրենիք:

Իր ամբողջ պատմության բնրացքում  
քճի հուր և ընդ ջուր՝ անցնենով պարել է  
հայ ժողովուրդը: Նա երկու անխոցելի զենք  
ուներ իր քշնամիների դիմ. մեկը նրա  
մարտանող ողին էր, մյուսը՝ իր հազարամ-  
յա մշակույթը, իր գիրն ու գրականությու-  
նը, իր հոգեկան գանձերը, որոնք նա դար-  
ձել էր իր համար անհաղթելի զենք, պող-  
պատյա վահան, գոյության իր երկարան  
պայմանում:

Հեռու անտի հայր եղել է նին աշխարհի  
կուլտուրական ժողովուրդերից մեկը:

Դարերի ու հազարամյակների խորենից  
մեզ են հասել հայկական կասիկ նարտա-  
րապետության լավագույն նմուշներ՝ ժան-  
դակագարդ ու հոյակապ նին վանքեր, պա-  
տմուներ, բերքեր ու մամուպատ ավերակ-  
ների ճկարագարդ սյուներ ու խոյակներ.

յորներանգ ծաղիկների գույնով ու բույրով  
հրաշագարդված հազարավոր ձեռագրեր:

Անցյալով հայ ժողովրդի ապրած տա-  
ռապանեներն ու ողբերգություններ չեն ապրել  
աշխարհում և ոչ մի ժողովուրդը: Ո՛չ մի  
բռնակալ, ո՛չ մի բարբառու չեն կարողա-  
ցել նվաճել ու ընկնել հայ ժողովրդի նայ-  
րենասիրական ողին, պայծառ հիշատակը  
իր լավագույն ապագայի նկատմամբ: Դի-  
մացել է նա, կուրծք է տվել դարերի արհա-  
վիրեներին և հասել այսօրվա լուսապայ-  
ծառ ներկային, մի ձեռքում «քուր կայծա-  
կին» պաշտպանել է իր Հայրենի տունն ու  
պատիկը, մյուսում՝ մշակույթի զենքերը,  
հերկել է իր նողը, կերել է իր արդար հա-  
ցը, ստեղծել է իր նոյակապ մշակույթը,  
արվեստի Հրաշալիքները, զարգացրել իր  
մեծամասն լիգուն:

1920 թվականին անդոնի եղրին էր հասել  
մեր ժողովուրդը: Աղքատության, սովի,  
մահվան մոայի ուրվականը սավանում էր  
ողջ Երկրի վրա: Լեզիանուր աղետը, հայ  
ժողովրդի գոյության սպանացող մեծ  
վտանգը առաջ էր բերել ամբողջ Երկրում  
ինքնանու գրդավանք ու զայրույթ: Հայ  
ժողովուրդը բարձրացրեց ազատամբուրյան  
ազատարար դրոշը: Նա իր փրկությունը  
տեսնում էր Հայաստանում սովետական  
կարգերի հաստատման մեջ: Եվ ահա, հայ  
ժողովրդի համար մոայի ու նախատագրա-  
կան այդ օրերին, օգնության ձեռք մեկնեց  
հայ ժողովրդի բարեկամ և ազատարար ուս  
ազնիվ ժողովուրդը: Հնչել էր հայ ժողո-  
վրդի ազատության ու փրկության ժամը:

Նոյեմբերը ստի կանգնեցրեց հայ ժողովրդին: Արյունաքամ հայ նոզու և հայ հողի վրա ծագեց մի նոր ու պայծառ առավոտ: Սովետական Հայաստանը հանդիսացավ հայ ժողովրդի երազների, դարավոր տառապանքների լուսավոր ու վերջնական հանգրվաճը, մեր Ավետյաց երկիրը:

Մեր երկիրը ստի գրեց ազգային-հաղափական, մշակութային վերածնուրյան միակ ու փրկարա ուրու վրա: Անցնող 35 տարիների ընթացքուն կառուցվեցին նոր հաղափներ, ամենուրեք բարձրացան հսկա արդյունաբերական գործարաններ, ֆարբիկաներ, անց կացվեցին ստորերկյա տունելներ, սողոգիչ շրանցքների կենսատու օղակներով պատվեց երկիրը: Ամրոջ երկիրը պատվեց հիդրոկայանների խիս ցանցով, գեղածիծաղ կապույտ Սևանից մինչև Ղափանի պղճանվ հարուստ լեռները, Արարատյան դաշտավայրից մինչև Արագածի ծաղկավետ լանջերը շողացին էլեկտրական լամպերը, ու գիշերը ցերեկ դարձավ: Հոսեց պղճալարերով էլեկտրանների հոսքը, ինչպես մարդու երակներով արյունը, հորեցին գործարանների մեմենաններ ու նախակները, փոկերն ու պտուտակները նոնչացին, երգելով նոր օրերի նոր երգը:

Հայ գյուղը հիմնովին վերափոխվեց: Հայ գյուղացին զարբնեց իր դարավոր բմբիրից, դուրս եկավ Քսենոփոնյան իր գետնափոր խրենիներից ու լիարով շնչեց ազատուրյունը: Հետադարյան արորն ու գուրանը իրենց տեղը գտան բանակարաններում ու հայրենական մեր դաշտերում հոնդացին տրակառերն ու կոմբայնները: Ծփացին արտեր ուրախուրյան անհուն, անսահման ծփանքներով:

Հոկտեմբերի շնչով և գաղափարով վերածված հայ ժողովուրդը տիրացավ հաղափական ու տեսեսական այդ ազատուրյան: Հայրենի իր հողերի վրա հայ ժողովուրդը 35 տարուց ի վեր իր ստեղծագործ աշխատանքով ու հանենարով ժայռերից փարդեր է բաղել, բարեր վերափոխել է հացի, լուսի, կյանքի: Այսօր հայ ժողովուրդը սերն է իր հողին, հացին, պատվին: Մոխիրների տակից հարյած ոգին որք հայ ժողովրդի:

Հայաստանում սովետական կարգերի հաստատման 35 տարիներին խպառ վերացվեց անգրագիտուրյունը, տարրական և միջնակարգ դպրոցների լայն ցանց ստեղծվեց երկրում: Լուսավորուրյունը բափա-

ցեց թե՛ զյուղ, թե՛ բաղամ: Երեանը դարձավ գիտարյան, կուլտուրայի օջախ: Գիտուրյունների ակադեմիա, համալսարան, ինստիտուտներ, տեխնիկումներ, գրադարաններ, բարոններ, օպերա, բանգարաններ և այլ կրթական հաստատուրյուններ իրենց պատվավոր տեղերը գրավեցին մայրավագուս: Երեմնի հողաշեն երեանը կերպարանափոխվեց, գեղեցկացավ: Ո՞ր հայրենակարու նոզիներ կուսենային տեսնել գեր մի անգամ մեր գեղեցիկ երեանը: Հայրենի յուրաքանչյուր թիզ հողի ու բարի վրա հայ ժող ժողովրդի մեռնարույց ձեռքի շնորհն ու շերմուրյունը կա:

Միայն սովետական իշխանուրյան հաստատումից հետո էր, որ հայ ժողովուրդը խաղաղ ու շեն իր Հայրենիքում կարողացավ իր հոգեկան ուժերի զարգացման լայն հետարարուրյուններ տալ: Նոր ու հօգարափով իր վերելքն ապրեց հայ մշակույրը: Մի կարե ժամանակամիջոց, զարգանալու, անելու մի խաղաղիկ պահ, և ամա հառնեց մոխիրների տակից, որպես փյունիկ, ներան հայ ժողովուրդը:

Հազարամյակների ընթացքում հայ ժողովրդի հոգում երել չի հանգել ազատուրյան անշեշ ծարակը և հայրենասիրուրյան բոցավառ զգացմունքը: Եվ նոյեմբերի 29-ր այդ երկու զգացմունքների ամենաշեղ արտահայտուրյունը հանդիսացավ:

Եր ազգային մեծ տանի առի երախտագեան հայ ժողովուրդը անկեղծ հարգանքի, նորը երախտագիտուրյան շերմ խոս ունի իր ավագ եղբոր՝ ուս մեծ ու ներսաւական ժողովրդի նկատմամբ: Հայ ժողովուրդը ունի մի անկեղծ ու անշահիսնդիր բարեկամ: Դա ուս ժողովուրդն է:

Ցնծուրյուն է այսօր ամեն հայ հայրենասեր մարդու հոգում: 35 տարի է, ինչ անա հայ ժողովուրդը իր հայրենի հողի վրա մարմին է տալիս իր լուսակերա երազներին: Անցնող յուրաքանչյուր տարի հաղորդյան, երշանկուրյան նոր զարուններ է թերում մեր երկրին և մեր ժողովրդին:

Այսօր պայծառ է հայ ժողովրդի ներկան, ավելի և նուսալից, նրա ապագան: Այսօր, իր ազատուրյան ու անկախուրյան փառապան տանի առի, հայ ժողովուրդն օրիներգում է այն փրկարա նախախնամական ձեռքը, որը նախապարն է բացել իրեն համար դեպի նոր կյանք ու արեաղող ապագա:

Փառ վերածնված հայ ժողովրդին:





## ՔԱՐՈԶ

ՊԱՐԴԵՎԱ. Ա.ԹԵՂԱ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

### ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍԻ ՆԵՀԱՏՍԿՈՒԹՅՈՒՆԸ

(Խոսված Մայր Տաճարում Ս. Ստեփանոսի տոնին)

«Երէ ոք կամի գալ զկենի իմ, ուշացէ զանձն իւր և բարձէ զխաշ իւր և եկեցէ զկենի իմ»:

(ՄԱՐԿ., Է. 34)

Թիստոսի աշակերտ լինելու առաջին ու հիմնական պայմաններից մեկը անձնուրացությունն է, նվիրվածությունը քրիստոնեական սուրբ իդեալների՝ անձնուրացության համանելու աստիճանով։ Ոչ ոք մեծ չի եղել առանց զոհողության։ Քրիստոնեության առաջին դարում գետի պես հոսել է հավատացյալների արյունը։ «Արին մարտիրոսաց՝ հիմն եկեղեցույց»։ Նրանք հանուն քրիստոնեական կրոնի հաւաքածեցան, քարկոծեցան, սղոցեցան..., բայց հասին աւետեցան։

Հին, հեթանոս աշխարհի զեմ պայքարելիս առաջին մեծ սրբերը բացի իրենց հավատից և անձնուրացությունից, ուրիշ ուշնաշ շունեին։ Աշխարհը նրանց հաւածեց, բայց դարերը խոնարհեցին նրանց սուրբ նահատակության առաջ։ Եվ առաջին մարդը, որ հանուն քրիստոնեական սուրբ կրոնի զոհվեց, դա Ստեփանոս սարկավագն էր, որի նահատակության տոնն է կատարում այսօր Հայաստանյաց Առաքելական Ս. Եկեղեցին։

Գործք Առաքելոցում Ս. Ստեփանոսի մասին պատմվում է, որ նա նոր ժնտրված յոթ սարկավագներից մեկն էր, և այր լի հաւատով և զօրութեամբ», որին հրեաները ձերքակալեցին և կանգնեցրին հրեական դատարանի առաջ, որպես Մովսեսական կրոնի արհա-

մարհողի։ Նա անվեհեր քաջությամբ, խորը հավատով պաշտպանեց իր կրոնական համոզմունքների ճշտությունը, հոչակեց Հիսուսի մեսիականությունը, դատապարտեց հրեաների կրոնական մոլեպանդությունն ու կուրությունը, և քրիստոնեական սուրբ կրոնի ճշշմարտությունների համար նահատակվեց քարկոծությամբ, իր մահվան մեջ ևս աղոթելով իր սպանողների համար։ Այս իսկ պատճառով նա կոչվեց մահավավկա և առաջին մարտիրոս։ Նա էլ վերցրեց իր խաչը և գնաց Հիսուսի հուկեց։

Ս. Ստեփանոսի նահատակությունից հատուկսկզբ ուժեղ հաւածանք քրիստոնյաների դեմ։ «Քրիստոնյաները առյուծներին», — գոռում էին հոռմեական կայսրության բոլոր հարապարակների վրա, և հազարներ նահատակվում էին, մինչ ամրանում և աճում էր Եկեղեցին Սամարիայում, Միջերկրական ծովի ավազանում, Փյունիկիայում, Կիպրոսում, Անտիոքում, Ասորիքում, Հայաստանում, Հռոմում։

Սուրբ Ստեփանոսի այս սուրբ տոնին մենք շենք կարող չհիշել մեր այն բազմաթիվ մարդութիրուններին, որոնք հանուն քրիստոնեության, հանուն Հայրենիքի զոհվել են ու սըրբացվել մեր ժողովրդի, մեր Եկեղեցու կողմից։

Մեր ժողովրդի պատմությունը մի սովորական պատմություն չէ, այլ մի մարտիրոսագրություն. Հանուն քրիստոնեական կրոնի և Հայրենիքի, հանուն առաջադիմության:

Մեր Հայրենիքի հողի վրա, յուրաքանչյուր քարի տակ մի-մի նահատակ է հանգչում: Այդ քարերի լեզուն ավելի շատ բան կպատմի մեղ մեր սուրբ նահատակների կրած անասելի տառապանքների, շարշարանքների և նահատականության մասին: Դարերի և ժամանակների ամենի ալիքն է անցել մեր Հայրենիքի վրայով:

Հանուն քրիստոնեության՝ ինչե՞ր չի կրել Հայ Հավատացյալը: Նա իր կյանքի գնով պահպանել է իր Հայրենի սրբությունները, Հավատի հուրը, Հայրենասիրության բոցավառ զգացմունքը, իր Հոյակապ մշակութը, լեզուն:

«Հազիվ թե, բացի Հայերից, կա աշխարհի վրա մի ուրիշ ժողովուրդ, որ այդպիսի տոկունությամբ և Համերաշխությամբ իր ուսերի վրա կրեր քրիստոնեությունը և պաշտպաներ այն օտարադավանների ամեն տեսակի ստրկացումից», — գրում է ոռոս պատմաբան Դուքրավինը:

Քրիստոնեական լույսի մեջ թրծվեց Հայության Հավատավոր ոգին, դարձավ ամսխոցելի գալիք բոլոր արհավիրքների և շրջեղեղների դիմաց:

Հիշենք Վարդանանց մեծ պատերազմում ընկած նահատակներին: Բայց այդ հերոսամարտը միակը չէ: Հարուստ է Հայ ժողովրդի պատմությունը Հանուն Հայ Հավատի, Հանուն Հայրենի սրբությունների մղված աղատագրական պայքարի Հերոսական դրվագներով:

«Մա՞ս իմացեալ անմահութիւն է, մա՞ս ոչ իմացեալ՝ մահ», — ասում է մեր ոսկեծղիկ պատմագիր Եղիշեն:

Մեր նահատակների մահը իմացված մահ է. նրանք քրիստոնեության խաչը կրծքներին, Հայրենասիրության զգացումը սրտներին, գուրք են եկել իրենց ժամանակի տգիտության, խավարի և բռնության դեմ ու ընկել որպես Հաղթական զինվորներ, բայց չեն մեռել, որովհետեւ նրանց հիշատակը հետնորդների սրտում մնացել է անմար ու գործը շարունակվել սերունդների կողմից:

Թո՛ղ օրհնեալ լինի նրանց հիշատակը այժմ և միշտ և Հավիտյան Հավիտենից, ամեն:





## ՄԱՅՐ ԱԹՈՒՌԻՄ

ՄԱՅՐ ԱԹՈՒՌ ՎԵՐԱԿՈՌՈՒՑՄԱՆ  
ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

«ԷՇՄԻԱՇԻՆ» ԱՄՄԱԴՐԻ  
ԽՄԲԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Անցան Ազգային-եկեղեցական ժողովի գումարման, Ամենայն Հայոց Հայրապետի ընտրության և օծման, Սրբալույս Մեռոնի օրհնության և եպիսկոպոսական ձեռնադրության խանդավառ ու պատմական օրերը և Մայր Աթոռը նորից ներամփոփեց. իր վանական շրջանակի մեջ նորընտիր Հայրապետը երիտասարդական կորովով ձեռնամուխ եղավ առաջին իսկ օրից Մայր Աթոռի հոգու վաճառքի մշակութային, տնտեսական կյանքի վերակառուցման ծանր ու պատաժանատու աշխատանքներին. Վստահ ենք, որ հայ հավատացյալ ժողովուրդը սրտագին ուրախությամբ պիտի ողջունի Մայր Աթոռի վերակառուցման առաջին և հուսադրիչ աշխատանքները:

ՄԱՅՐ ԱԹՈՒՌ Ս. ԷՇՄԻԱՇԻՆԻ  
ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամենայն Հայոց ազգնուիր Կաթողիկոս և Սայրապուն Պատրիարք Տ. Տ. Վազգեն Ա. Հայրապետը մշակել է Մայր Աթոռ Ս. Էշմիածնի միաբանության հատուկ Կանոնադրությունը:

Միաբանական առաջին ժողովում, որին ներկա էր նորին Վեհափառությունը, կարդացվեց սույն Կանոնադրությունը և միահամու ընդունելությունը գտավ միաբանության բոլոր անդամների կողմից:

Ամբողջովին գիտական աշխատանքի անցնելու կապակցությամբ պրոֆ. Ա. Արրահամյանը իր գիմումի համաձայն ազատված է «Էշմիածն» ամսագրի խմբագրի տեղակալի պարտականություններից և Վեհափառ Հայրապետի հրամանով խմբագրի տեղակալ նշանակված պրոֆ. Առաքել Առաքելյանը:

### ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՍԵՂԱՆԱՏՈՒՆԵՐ

Նորին Մրբության հրամանով կազմակերպվեց ընդհանուր միաբանական սեղան, որը հավասարապես սպասարկում է միաբանության և Հոգմոր Ճեմարանի սաներին:

Նոյեմբերի 7-ին միաբանական սեղանատան բացման արարողությանը ներկա եղավ Վեհափառ Հայրապետը և ճաշեց միաբանության հետ:

Միաբանական սեղանատան վարիչ նշանակված է Հոգեհնորհ Տ. Մաշտոց արեղաթաջրյանը:

ԵՐԻՑԱՍԱՐԴ ՄԻԱԲԱՆԱԵՐԸ  
ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ

Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի ամենօրյա և հատուկ հոգատարության առարկա են միաբանության երիտասարդ անդամները: Հոգմոր կյանքի լավագույն կերպով պատրաստվելու և քարոզչության արվեստով փորձառություն ձեռք բերելու նպատակով հայրապետական կարգադրու-

թյամբ, շարաթվա մեջ երկու անգամ, Մայր Տաճարում հերթով քարոզ են խոսում երիտասարդ Հոգևորականները։ Մինչև հիմա քարոզել են բարձրապատիվ Տ. Կոմիտաս վարդապետ Տեր-Մտեփանյանը, Հոգեշնորհ Տ. Եղիշե, Տ. Հայրիկ, Տ. Վահան, Տ. Պարգև, Տ. Մուշեղ, Տ. Տիրամը և Տ. Մաշտոց արեդաները։

Քարոզներին միշտ ունկնդրում է Վեհափառ Հայրապետը և իր ներկայությամբ քաշալերում է երիտասարդ քարոզիչներին։

### ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԴԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ 35-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Նոյեմբերի 29-ին՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման 35-րդ տարեդարձի օրը, Մայր Տաճարում կատարվեց Հանդիսավոր մաղթանք՝ ներկայությամբ Վեհափառ Հայրապետի, ի բարգավաճումն և ի բարորություն ամրող հայության պաշտելի Մայր Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի, Պատարագիշ գերաշնորհ Տ. Սահակ Եպիփառպոս Տեր-Հովհաննիսյանը խոսեց Հայրենացունչ քարոզ։

Արարողությունից հետո Վեհափառ Հայրապետը հետևորդ ունենալով միարանությունը, ծեմարանի ուսանողներն ու ներկա ժողովուրդը, բարձրացավ Հոգմոր ծեմարանի փոքր դահլիճը և նախագահեց օրվա տոնի առթիվ կազմակերպված հանդեսին, որը զեկավարեց ծեմարանի վերատեսուլը։

Եղան ուղերձներ, բանաստեղծություններ, մեներգներ և խմբերգներ։ Հանդեսին բանախոսեց ծեմարանի դասախոս պ. Ա. Նազարյանը. նա նկարագրեց սովետական կարգերի հաստատմանց առաջ Հայաստանի ողբալի դրությունը և տիտուր անցյալին հակադրեց վերածնված Հայրենիքի փառահեղ ներկան։

Հանդեսի վերջում փակման խոսքով Վեհափառ Հայրապետը գոհունակություն այտնեց հանդեսի կազմակերպման առթիվ։

Վեհափառի «Պահապանիչ» հետո հանդեսը փակվեց քառաձայն «Բա՛մ, փորոտան» երգով։

### ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ս. ԷՉՄԻԱՅԻՆ

Մայր Տաճարի վերանորոգումից հետո, մոտ ու հեռու վայրերից հայ հավատացյալներ գալիս են համազգային ուսումնավայր Մայր Աթոռ՝ ծննդադրելու Ս. Լուսավորչի կանթեղի ստաջ և օրնությունն ստանալու կուսավորցի արժանավոր հաջորդ նորին Ս. Օծություն Վաղգեն Ա. Կաթողիկոսի Այցելուների և ուստավորների թվում են նաև օտար հյուրեր և պատվիրակություններ։

Սույն թիվ նոյեմբեր ամսական Մայր Աթոռ Ս. Էջմիածին են այցելել հետևյալ պատվիրակությունները։

Նոյեմբերի 2-ին. Սովետական Միության հետ մերձեցման նոր-Զելանդական ընկերության պատվիրակությունը՝ գլխավորությամբ Զոն Հոլլի։

Նոյեմբերի 3-ին. Հին ճարտարապետների և քաղաքաշինարարների պատվիրակությունը, որին գլխավորում էր Զինական ժողովրդական Ռեսպուբլիկայի Պետական Խորհրդի Քաղաքային շինարարության գլխավորը վարչության պետ Վան Լին։

Նոյեմբերի 4-ին. իտալացի գորող Կարլո Լիին, որին ուղեկցում էին Համամիութենական Սովետական գրողների միության աշխատակից Բրեյտբրոգը և Մնացականյանը. նոյն օրն այցելեց նաև շին ճարտարապետների մի այլ խոմբ։

Նոյեմբերի 11-ին. Ռումինիայի մայրաքաղաք Բուխարեստից՝ Վիկտոր Պետրովիչ Տելիքան։

Նոյեմբերի 12-ին. Ռումինական ժողովրդական Ռեսպուբլիկայի վաստակավոր արտիստուհի, Պետական մրցանակի լաւորեատ Զինադա Պալլին և ոռոմինական օպերայի արտիստ Կարպիս Զորյանը. Ամենայն Հայոց Հայրապետ Վեհափառ Տ. Տ. Վաղգեն Ա. Կաթողիկոսը բարեհանցեց ընդունել հյուրերին։

Նոյեմբերի 13-ին. Կոլումբիայի և Մոնղոլիայի պատվիրակությունները։

Նոյեմբերի 17-ին. Ալբանական ժողովրդական Ռեսպուբլիկայի լուսավորության և կուլտուրայի գործիչների պատվիրակությունը՝ գլխավորությամբ Ալբանական ժողովրդական Ռեսպուբլիկայի կուլտուրայի և լուսավորության մինիստր Ռամես Ալխանի,

Ավագ լուարար գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի կողմից Մայր Տաճարի մասին տրված պատմական տեղեկությունները մեծ հետաքրքրությամբ լսում էին բոլոր այցելուները:

### ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԹԵՄ

Նորին Վեհափառության Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա. Կարգադրությամբ նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին Ս. Էջմիածնի միաբանները Մայր Տաճարում կարդացել են քարոզներ:

Քարոզ են կարդացել հետևյալ միաբանները.

1. Կոմիտաս Վարդապետ. բնաբան՝ «Տէր, եթէ զշոթունս իմ բանաս, բերան իմ երդեսէ զօրհնութիւնս քո» (10 նոյեմբերի):

2. Հայրիկ արեղա. բնաբան՝ «Ավաշխարեցէք, զի մերձեալ է արքայութիւնն երկնից» (17 նոյեմբերի).

3. Վահան արեղա. բնաբան՝ «Ձի ոչ գիտէք, եթէ Տաճար էք Աստոծոյ» (19 նոյեմբերի).

4. Կոմիտաս Վարդապետ. բնաբան՝ «Ել սերմնացան սերմանել զսերմանիս իւր...» (22 նոյեմբերի).

5. Եղիշե արեղա. բնաբան՝ «Ուր են ժողովեալ երեք հոգի յանոն իմ, անդ եմ ես ի մէջ նոցա» (24 նոյեմբերի).

6. Պարգև արեղա. բնաբան՝ «Եկայք շինեցուք սուրբ զխորանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի» (26 նոյեմբերի).

7. Վահան արեղա. բնաբան՝ «Մոլորեցայ ես որպէս զոշխար կարուաեալ, խնդրեա զծառայս քո, Տէր, զի զպատուիրանս քո ես ոչ մոռացայ» (Ս. Հոփիսիմեոսմ, 27 նոյեմբերի).

8. Սահակ եպիսկոպոս. Մաղթանք և քարոզ Սովորական Հայաստանի 35-րդ տարեդարձի առթիվ (29 նոյեմբերի).

9. Մաշտոզ արեղա. բնաբան՝ «Երանի խաղաղարարաց» (31 նոյեմբերի).

10. Մոլցե արեղա. բնաբան՝ «Աշ ամենիցուն ի քեզ յուսան և դու տաս նոցա կերակոր ի ժամու» (3 դեկտեմբերի).

11. Հայրիկ արեղա. բնաբան՝ «Արթուր կացէք, զի ոչ զիտէք զօրն և ոչ զժամն» (տասը կույսեր, 10 դեկտեմբերի).

12. Եղիշե արեղա. բնաբան՝ «Վաճառիցէք զինչս ձեր և տուք աղքատաց» (12 դեկտեմբերի).

13. Տիրայր արեղա. բնաբան՝ «Երուսաղէմ, Երուսաղէմ, թէ մոռացայց զքեզ» (17 դեկտեմբերի).

14. Կոմիտաս Վարդապետ՝ փարիսեցու և մաքսավորի առակի մասին (20 դեկտեմբերի).

15. Վահան արեղա՝ բարեսիրու սամարացու առակի մասին (22 դեկտեմբերի).

16. Մոլցե արեղա՝ քանքարների առակի մասին (24 դեկտեմբերի).

17. Պարգև արեղա՝ Ս. Ստեփանոսի նահատակության մասին (25 դեկտեմբերի):

### ՄԱՅՐ Ա.ԹՈՌՈ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ԹԱՆԳԱՐԱՆԸ

Վեհափառ Հայրապետի անմիջական հրակողությամբ և Մայր Տաճարին կից եկեղեցական թանգարանի հանձնաժողովի աշխատանքների շնորհիվ կարճ ժամանակում կազմվեց երեք բաժիններից բաղկացած պատմական թանգարանը, որպեսզի Մայր Աթոռի մի շարք նվիրական սրբություններն ու հնագիտական արժեքներ ներկայացնող իրերը մատչելի դառնան բարեկարգ ու վաստակություն ունենալի հրապարական Մայր Տաճարի բոլոր սրբազն մասունքները, եկեղեցական թանկարժեք անոթներ, բոլորն էլ ցուցակագրված և գեղեցիկ ապակյա զարակների մեջ դարսված: Թանգարանի մասին մեր հաջորդ համարներում կտրվի լրիմ նկարագրություն:

### ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄՈՐ ԺԱՄԱՆՈՒՄԸ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔ ԵՎ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Դեկտեմբերի 27-ին Ս. Էջմիածին ժամանեց Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի մայրը՝ ամիկին Սիրանուշ Պալճյանը, ընկերակցությամբ ոռոմինահայ թեմի քարտուղար պլ. Հովհաննես Գալիխաքյանի:

Վեհափառի մորը դիմավորելու համար Սոսկվա էր մեկնել Մայր Աթոռի տնտեսագինանսական գործերի վարիչ պլ. Հմայակ

Սեպտեմբերի Երևանի կայարանում իր սիրելի մոռը դիմավորեց անձամբ Վեհափառ Հայրապետը։ Հուզիչ ու սրտագրավ էր մոռ և որդու հանդիպումը։


Երջանիկ որդի և բախտավոր մայր։

ԳՐԱՅԻ ՔԱՂԱՔԻ ԱՍՏՎԱՇԱԲԱՆԱԿԱՆ  
ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆ ՀԱՅՐ ՄԱՐՍԻ  
ՌԵԺԻՄԻ ՎԵՀԱՓՈԽԻ ՄՈՏ

Դեկտեմբերի 20-ին, ընկերակցությամբ  
ՍՍՌՄ Մինիստրների Սովետին կից Կրոնա-  
կան պաշտամունքների գործերի խորհրդի

նախագահ պ. Պոլյանսկու և Հայկական ՍՍՌ-  
Մինիստրների Սովետին կից Հայ եկեղեցու  
գործերի խորհրդի նախագահ պ. Հրազդա Գրի-  
գորյանի, Վեհափառ Հայրապետին այցելեց  
Ավստրիայի Գրաց քաղաքի աստվածաբանա-  
կան ֆակուլտետի դեկան Հայր Մարտիր Ռե-  
տինկին։ Հարգելի հյուրը մեծարվեց Մաղկա-  
դահրձնում, զրոյց ունեցավ Վեհափառ  
Հայրապետի հետ, այցելեց Մայր Տաճա-  
րը, Թանգարանը, Հոգևոր Ճեմարանը և լա-  
վագույն տպագորություններով մեկնեց Մայր  
Աթոռից։





## Ա. ԷԶՄԻԾԺՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄՄՐԱՆԻ 1955—1956 ՈՒՍՈՒՄՆԱԿՅՆ ՏԱՐԵԾԲԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ

Հոկտեմբերի 17-ին, երկուշաբթի առավոտ, Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա. ի բարձր հովանավորությամբ կատարվեց Հոգևոր Ճեմմարանի ընթացիկ ուսումնական տարեշրջանի բացումը, որ կաթողիկոսական ընտրությունների կապակցությամբ սեպտեմբերի 1-ից փոխադրվել էր հոկտեմբերի 17-ին:

Հոգևոր Ճեմմարանը դարձել էր մտքի ու հոգու խսկական կենտրոն: Այնտեղ էր Վեհափառ Հայրապետը, այնտեղ էին Գերագոյն Հոգևոր Խորհրդի անդամները՝ գերազնորդ Տ. Մահակ եպիսկոպոսը, Տ. Եղիշիկ եպիսկոպոսը, Տ. Վարդան եպիսկոպոսը, միաբանության անդամ վարդապետներ, աբեղաներ, քահանաներ, դպիրներ, դասախոսներ և ուսանողներ:

Վեհափառ Հայրապետի և Հոգևորական ուղեկիցների Ճեմմարան մուտքը տեղի ունեցավ որոտագին ծափահարությունների մեջ: Ապա, հավաքված ընդարձակ դասարանում, կատարվեցին մաղթանք, օրհնյալ շրով օրհնություն Հոգևոր Ճեմմարանի շորս ծագերի և կրոնական պատշաճ արարողություն, որից հետո վերատեսուշ պ. Մարտիրոս Տեր-Մատիանյանը, կարճ և կուռ ուղերձով խընդրեց նորին Վեհափառության՝ տալ Հայրապետական օրհնությունը, որպեսզի աստվածա-

յին շնորհն ու պաշտպանությունն անպակաս լինեն Հոգևոր Ճեմմարանի վրա, որպեսզի ուսանողների և ուսուցիչների աշխատանքը կատարվի խաղաղությամբ և արդյունաշատ՝ հօգուտ Հայաստանյաց Առաքելական եկեղեցու և հայ ժողովրդի:

Վեհափառ Հայրապետին ուղյալ գրավոր ուղերձով Գ դասարանի ուսանող Սանդրո Բեհրուզյանը (ուկարանկիր դպիր) Ճեմմարանի ուսանողության անոմից կարդաց ուղերձ ուղղված Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս և Սայրագույն Պատրիարք Տ. Տ. Վազգեն Ա. ին:

Վեհափառ Հայրապետը, ի պատասխան ուղերձների խոսած բովանդակալից ճառով, նշելուց հետո, թե ինքն էլ անցյալում եղել է մանկավարժ ուսուցիչ և սիրել գիրն ու գրականությունը, դպրոցը, աշակերտներին, խոսքն ուղղեց Ճեմմարանի ուսանողներին և այսպես խրատեց. «Պետք է սիրել այն դորձը, որին լծվել եք: Պետք է սիրել այն նպատակը, որին հետամուտ եք: Պետք է սիրել Հայաստանյաց Եկեղեցին, որին ապագա ծառայողները պիտի լինեք իզուր է եկել և Հոգևոր Ճեմմարան ընդունվել այն երիտասարդը, որ սեր չունի իր լծված աշխատանքի, իր հետամտած իդեալի՝ ծառայել Եկեղեցու և Հոգևոր Ճեմմարանի՝ արտաքինով համեստ,

բայց կողումով մեծ այս հաստատության հանդեպունքը Հոգևոր կոչման վեհությունն ու նվիրականությունը բացատրելուց հետո, Վեհափառ Հայրապետն այսպես եղրափակեց իր իմաստալից խրատականը:

«Եթե այսօր երգով ու աղոթքով կատարեցինք Հոգևոր Ճեմարանի 1955—1956 ուսումնական տարեշրջանի բացումը, դա ձեւականություն չէ: Մենք հավատում ենք, որ մեր գործը սուրբ է և նվիրական: Մենք այդ սուրբ և նվիրական գործը սկսեցինք մաղթանքով, երգով և աղոթքով, այն հաստատ հավատով, որ Աստված շնորհներ պիտի տա և Դուք պիտի դառնաք Քրիստոսի ճշմարիտ աշակերտները, Հայ Եկեղեցու հավատարիմ սպասար-

կողները, Հայ հավատացյալ ժողովրդին միմիթարություն բաշխող վեհանձն հոգևորականները:»

Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ և Մայր Տաճարի ավագ լուսարար գերազնորհ Տ. Սահակ հպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի քաջալերական խոսքերից հետո նորին Ս. Օծություն Վեհափառ Կաթողիկոսը տվեց իր Հայրապետական օրհնությունը Հոգևոր Ճեմարանի ուսանողության, ուսուցչական կազմին և վերատեսչության: Հանդեսը վերջացավ Վեհափառ Հայրապետի «Պահպանիչը ու ուսանողների երգած «Եղ Միածինն ի հօրէ» շարականով:

ՃԵՄԱՐԱՆԱՍՆԵՐ





## ՀՈԴԵՑՆՈՐՀ ՄԱԾՏՈՅ ՍԲԻԼԱ ԹԱԶԻՐՑԱՆ



Մաշտոց արեղա Թաղիրյանը ծնվել է 1895 թվականի դեկտեմբերի 24-ին, Թյուփիայի Կեսարիա քաղաքի Կերմիր (Կարմիր) գյուղաղաքում։ Նրա աշխարհական անունը եղել է Դավիթ։

Իր նախնական կրթությունը ստացել է ծննդավայրի Պարթևան վարժարանում։ 1912 թվին աշակերտել է Կեսարիայի Ս. Կառապետ վանքի Ճեմարանին և 1915 թվին փայլում կերպով ավարտել նրա դասընթացը։

1915—1918 թվականերին, տարագրության օրերին, աքսորվել է և Հրաշքով պատվելով մահից, անցել է Եվրոպա և Փարիզում Հետեւ իրավաբանության և պատմության ֆակուլտետներին և մասնագիտացել Մերձավոր Արևելքի ժողովուրդների պատմության մեջ։


Աշխատակցել է մի շարք թերթերի և ժուռանների։ Ապա բնակություն հաստատելով Բեյրութում (Լիբանան), մասնակցել է պատյին-հասարակական կյանքի։

Հայրենիք վերադառնալով 1947 թվին, աշխատակցել է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագրին»։

